ԿԱՐԾԻՔ

Զոհրակ Մեխակի Ապրեսյանի՝ «Սեփականության իրավունքի պաշտպանության սահմանադրական երաշխիքները (համեմատական իրավական հետազոտություն և մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան)» թեմայով ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք - սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

«Սեփականության իրավունքի պաշտպանության սահմանադրական երաշխիքները (համեմատական իրավական հետազոտություն և մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան)» վերտառությամբ ատենախոսությունը նվիրված է սեփականության իրավունքի պաշտպանության սահմանադրական երաշխիքների հետազոտությանը:

Ընտրված թեմայի արդիականությունը պայմանավորված է ինչպես սեփականության իրավունքի պաշտպանության սահմանադրական և միջազգային իրավական երաշխիքների ուսումնասիրության անհրաժեշտությամբ՝ հաշվի առնելով հատկապես 2015 թվականի սահմանադրական փոփոխությունները, այնպես էլ սեփականության իրավունքի պաշտպանվածության աստիճանի բարձրացման և այդ գործընթացի իրականացման համար անհրաժեշտ կառուցակարգերի ներկայացման կարևորությամբ:

Մասնավորապես, ՀՀ Սահմանադրությունում 2015 թվականին տեղի են ունեցել սեփականության իրավունքի սահմանադրական կարգավորման զգալի փոփոխություններ, որոնք արժանի են համապարփակ հետազոտության: Միևնույն ժամանակ, սեփականության իրավունքը՝ որպես սահմանադրորեն ամրագրված մարդու հիմնական իրավունք, կարող է իրավունքի զարգացման արդյունքում ձեռք բերել պաշտպանության նոր երաշխիքներ՝ ապահովելով սեփականության իրավունքի պաշտպանվածության ավելի բարձր մակարդակ:

Ատենախոսության շրջանակներում հեղինակի կողմից ուսումնասիրվել են ինչպես հայ, այնպես էլ արտասահմանյան հեղինակների աշխատություններ:

Ատենախոսությունը հատկապես արժեքավոր է դարձնում հեղինակի կողմից սեփականության իրավունքի պաշտպանության երաշխիքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան երկրների օրենսդրության իրավահամեմատական վերլուծությունը, ՀՀ Սահմանադրական դատարանի և

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի քանի տասնյակ որոշումների ուսումնասիրությունը:

Գրախոսվող աշխատանքի նպատակն է՝ ապահովել սեփականության իրավունքի պաշտպանվածության մակարդակի բարձրացումը, սեփականատիրոջ և այլ անձանց օրենքով պաշտպանվող իրավունքների միջև արդարացի հավասակշռության հաստատումը:

Ատենախոսության տեսական նշանակությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հետազոտության արդյունքում կատարված եզրահանգումները կարող են օգտագործվել տվյալ ոլորտի իրավական ինստիտուտների մասով մեկնաբանություններ կատարելու և տեսական հիմք հանդիսանալ այլ հետազոտությունների համար: Միևնույն ժամանակ, աշխատանքն ունի նաև գործնական նշանակություն, ինչը պայմանավորված է այն հիմնավորմամբ, որ դրանում կատարված վերլուծությունները կարող են պետության օրենսդրական գործունեության շրջանակում իրավասու սուբյեկտների կողմից օրենսդրական փոփոխություններ կատարելու նախաձեռնություններ ցուցաբերվել:

Գրախոսվող ատենախոսության գիտական նորույթն արտացոլված է աշխատանքում առկա վերլուծություններում և դրանց հիման վրա ներկայացված եզրահանգումներում ու գործնական առաջարկություններում:

Միաժամանակ, անհրաժեշտ է նկատել, որ ատենախոսության հիմնադրույթները համարժեքորեն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված յոթ գիտական հոդվածներում, որոնք տպագրվել են ՀՀ ԲՈԿ-ի կողմից գիտական հետազոտությունների համար ընդունելի պարբերականներում:

Ատենախոսության թեման և բովանդակությունն ամբողջությամբ համապատասխանում են ընտրված մասնագիտությանը:

Դրական գնահատելով հեղինակի կատարած աշխատանքը, այնուհանդերձ հարկ եմ համարում ներկայացնել որոշ նկատառումներ, մասնավորապես.

1) Պաշտպանության ներկայացվող 2-րդ կետի (էջ 9) և «Սեփականության իրավունքի սահմանափակման պայմանները» վերտառությամբ 2.1-րդ ենթագլխի դրույթների (էջ 57-79) համակարգային վերլուծությունից հեղինակը ներկայացրել է վարչական ակտերի հիման վրա տուգանքների բռնագանձումը սեփականության իրավունքի զրկում դիտարկելու և բռնագնաձումը դատական կարգով իրականացնելու հիմնավորումներ, որոնք, կարծում եմ, որոշակի հստակեցման կարիք ունեն այն պատճառաբանությամբ, թե ինչու է հեղինակը տվյալ մեկնաբանությունը տարածում միայն վարչական ակտերով տուգանքների բռնագանձման կարգի վրա, այլ ոչ թե սեփականության իրավունքը սահմանափակող բոլոր հնարավոր վարչական ակտերի նկատմամբ:

2) Միաժամանակ, նույն 2.1-րդ ենթագլխի շրջանակում հեղինակը նշում է, որ թեև արտադատական կարգով տուգանքների բռնագանձումը զգալիորեն ազատում

է դատական համակարգը ծանրաբեռնվածությունից (էջ 74), սակայն մյուս կողմում առկա է մարդու և քաղաքացու սեփականության սահմանադրական իրավունքի պաշտպանության անհրաժեշտություն, որը բովանդակային առումով չի բխում Սահմանադրության 60-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորման պահանջներից: Եվ ասվածի համատեքստում, անհրաժեշտ է նկատել, որ հեղինակը, մի կողմից, վարչական ակտերով տուգանքների բռնագանձման դատական կարգի անհրաժեշտությունը վկայակոչելիս, դատարանների ծանրաբեռնվածության հարցի լուծման համար որևէ այլ այլընտրանքային տարբերակներ չի առաջարկում, իսկ մյուս կողմից, դարձյալ իրավացիորեն մատնանշում է նման հնարավոր բացասական հետևանքների մասին (էջ 76-77):

3) Միաժամանակ, աշխատանքի 2.2-րդ ենթագլխում անդրադարձ կատարելով ժառանգելու երաշխավորված իրավունքի սահմանափակումների հիմնահարցերին, հեղինակը կատարում է եզրահանգում, որ՝ «(...) անհրաժեշտություն է առաջանում հստակ կարգավորել ժառանգատու-պարտապանի մահվան դեպքում պարտատիրոջ պահանջների բավարարման կարգը՝ վերջիններիս սեփականության իրավունքի իրականացման տեսանկյունից: Բոլոր դեպքերում այն պետք է իրականացվի մինչ գույքի անժառանգ ճանաչվելը: Կարծում ենք, որ ժառանգների բացակայության դեպքում (նաև նրանց կողմից ժառանգության վկայագիր ստանալու դիմում չներկայացնելու դեպքում) պարտատերերի պահանջները պետք է բավարարվեն ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքից այն բանից հետո, ինչ պարտատիրոջ պահանջի անվիճելիությունը հաստատվում է նոտարի կողմից կամ դատական կարգով» (էջ 79-99):

Կարծում ենք, որ նման եզրահանգումը լրացուցիչ որոշակիացման, պարզաբանման ու հստակեցման կարիք ունի, առավել ևս, երբ նման հարցերը կանոնակարգվում են օրենսդրական ակտերով:

4) Չնայած այն հանգամանքին, որ գրախոսվող աշխատանքում օգտագործվել են մի շարք տեսական աղբյուրներ, այնուհանդերձ դրանք գլխավորապես հայ և ռուս հեղինակների աշխատություններ են, աշխատանքը կշահեր, եթե հեղինակն օգտագործեր նաև այլ լեզուներով գրականություն: Օգտագործված գրականության ցանկում և ատենախոսության որոշ էջերում ամբողջությամբ պահպանված չեն հղումներին և օգտագործված գրականության ցանկին վերաբերող պահանջները:

Աշխատանքում առկա են նաև մասնավոր բնույթի այլ թերություններ, խմբագրական անճշտություններ, հեղինակային մտքի ոչ հստակ ձևակերպումներ, որոնք, սակայն որևէ կերպ չեն կարող բացասական ազդեցություն թողնել կատարված աշխատանքի գնահատականի վրա: Գրախոսման ներկայացված

ատենախոսությունը գիտական նորույթ պարունակող, ամբողջական և ավարտուն հետազոտություն է:

Ելնելով վերոշարադրյալից՝ գտնում եմ, որ **Զոհրակ Մեխակի Ապրեսյանի** «Սեփականության իրավունքի պաշտպանության սահմանադրական երաշխիքները (համեմատական իրավական հետազոտություն և մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան)» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով սահմանված պահանջներն, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.02.- «Հանրային իրավունք-սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ **Հ. Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ**

07.07.2021

Ստորագրությունը հաստատում եմ՝ Ա. Հ. Մոլոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ